



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

2012թ. Ծ սրբյի 7 - ի թիվ 5/5

ՀՀ ԱՌՈՂՋԱՊՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՍԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏԱՍԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի գ) կետի պահանջով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել ՀՀ առողջապահության նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ի. ԶԱԽԱՐՅԱՆ



ավելված

Հաստատվել է ՀՀ ՎՊ Խորհրդի

2012թ. մարտի 7-ի թիվ 5/5 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ

ՀՀ առողջապահության նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման և պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ վերահսկողության արդյունքների վերաբերյալ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողության հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի 2011 թվականի գործունեության տարեկան ծրագրի 5.2 կետը, Վերահսկիչ պալատի Խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 26/2 որոշումը:

Վերահսկողության նպատակը՝ ՀՀ Առողջապահության նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման արդյունավետության և ՀՀ օրենսդրությանը համապատասխանության ուսումնասիրություն:

Վերահսկողության առարկան՝ ՀՀ Առողջապահության նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, ինչպես նաև պետական սեփականության կառավարմանն ու օգտագործմանն ուղղված աշխատանքները, գործարքներն ու ընթացակարգը:

Վերահսկողության օբյեկտ(ներ)ը՝ ՀՀ Առողջապահության նախարարությունը, այդ թվում համակարգում գործող ընկերություններ:

Վերահսկողության ծավալը՝ Վերահսկողությունն ընդգրկել է նախարարությանը պետական բյուջեից 2009-2010թթ. և 2011թ. 9 ամիսներին հատկացված միջոցները, ըստ հետևյալ ծրագրերի՝

- Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց¹
- Ներդրումներ՝ առողջապահական կազմակերպություններում բժշկական սարքավորումների և շտապ օգնության մեքենաների ձեռքբերման համար
- Հայաստանի Հանրապետությունում Տուբերկուլոզի դեմ պայքարի Ազգային ծրագրի ուժեղացում
- Ջորակոչային և նախագորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ
- Հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայություններ
- Հիգիենիկ-հակահամաճարակային ծառայության գծով պետական պատվեր
- Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ
- Հաշմանդամ երեխաների օրթեզների և կորսետների պատրաստման ծառայություններ
- Առողջապահության համակարգի գործունեության զանգվածային տեղեկատվության ծառայություններ
- Տուբերկուլոզի դեմ պայքարի Ազգային ծրագիր
- Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի հակազդման ազգային ծրագրին աջակցություն ծրագիր
- ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ

Վերահսկողության կատարման ժամկետը՝ 15.11.2011 – 16.12.2011թթ.

Վերահսկողությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2009 թվականի հունվարի 1-ից մինչև ստուգման իրականացման ժամկետի ավարտը:

Վերահսկողության մեթոդաբանությունը՝ Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել են դիտարկման, ստուգման և վերլուծության ձևը, ինչպես նաև՝ համապատասխանության և ֆինանսական վերահսկողության տեսակները:

¹Այս ծրագրով 2009թ.-ին ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների նկատմամբ ՀՀ վերահսկիչ պալատը վերահսկողություն իրականացրել է 2009թ.-ին

Դիտարկման փուլում վերահսկվող օբյեկտից պահանջվել և ստացվել է անհրաժեշտ տեղեկատվություն՝ Վերահսկիչ պալատի տարեկան ծրագրով սահմանված թեմայի վերաբերյալ:

Ստուգման փուլում ապացույցների ստացման մեթոդներից կիրառվել են փաստաթղթերի ստուգման, ընթացակարգի և գործընթացի ուսումնասիրության, հարցման և հաշվարկման մեթոդները: Իրականացվել է ֆինանսական հաշվետվությունների և համապատասխան տեղեկատվության տարրերի միջև փոխկապակցվածության և/կամ համեմատության վերլուծություն:

Ստուգման ընթացքում կիրառվել են ընտրանքի, տարբեր տվյալների (քանակական և որակական) համադրման մեթոդներ, կատարվել է տարբեր փաստաթղթերի և տվյալների ուսումնասիրություն:

Վերլուծության փուլում ամփոփվել, ինչպես նաև վերլուծվել են վերահսկողության դիտարկման և ստուգման փուլերը:

Վերահսկողության արդյունքները՝

I.Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց

Ծրագրի շրջանակներում, ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին, դեղերը ձեռք են բերվել թվով 11 ընկերություններից՝ «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ից, «Նյու Ինտերնեյշնել Բիզանես Ֆարմ» ՍՊԸ-ից, «Արֆարմացիա» ՍՊԸ-ից, «Օրիենտ Ֆարմ» ՍՊԸ-ից, «Ֆեդիտա Ֆարմ» ՍՊԸ-ից, «Լամբրոն Ֆարմիմպեքս» ՍՊԸ-ից, «ՄԼՆ Ֆարմ» ՍՊԸ-ից, «Աննա-ֆարմ» ՍՊԸ-ից, «Ալֆա-Ֆարմ» ՍՊԸ-ից «Ֆարմ-Ադամա» ՍՊԸ-ից և «Ռիֆատեր-Լամբրոն» ՍՊԸ-ից, որոնք բաշխվել են Երևան քաղաքի և ՀՀ մարզերի բժշկական ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպություններին, անվճար և արտոնյալ պայմաններով դեղամիջոցներ ստանալու իրավունք ունեցող բնակչությանը տրամադրելու նպատակով:

Պայմանագրերով նախատեսված ժամկետներում դեղորայքը չնատակարարելու հետևանքով ժամկետանց օրերի համար նախարարության կողմից հաշվարկվել և մատակարար ընկերություններից գանձվել է տույժ 2010թ`-ին 3,134.0 հազ. դրամի և 2011թ.-ի 9 ամիսներին `7,249.2 հազ. դրամի չափով:

Ընտրանքային կարգով կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ անվճար և արտոնյալ պայմաններում դեղամիջոցներ ստանալու իրավունք ունեցող բնակչության դեղորայքային ապահովումն իրականացվել է տեղամասային կամ ընտանեկան բժիշկների, իսկ առանձին հիվանդությունների գծով համապատասխան մասնագետների միջոցով՝ ՀՀ կառավարության 23.11.2006 թ.-ի «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի և հիվանդությունների ցանկերը հաստատելու մասին» թիվ 1717-Ն որոշման պահանջներին համապատասխան:

II. Ներդրումներ առողջապահական կազմակերպություններում բժշկական սարքավորումների և շտապ օգնության մեքենաների ձեռքբերման համար

2009թ.-ին «Մեդիտեք» ՍՊԸ-ի հետ կնքված թիվ ՊԱՊՁԲ-07/132-1/5 համաձայնագրի և ՇՄ-01 և ՇՄ-02 պայմանագրերի հիման վրա ՀՀ առողջապահության նախարարությունը ձեռք է բերել անդրաձայնային տեսածրիչ (սոնոգրաֆիայի սարք) և գծային շտապ բուժօգնության երկու ամենագնաց, որնք հատկացվել են «Մարալիկի ԱԿ», «Հրազդանի ԲԿ» և «Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոն» ՓԲ ընկերություններին:

ՀՀ կառավարության 03.06.2010թ.-ի թիվ 670-Ն, 25.11.2010թ.-ի թիվ 1541-Ն և 2010թ.-ի դեկտեմբերի 23-ի թիվ 1347-Ն որոշումներով ՀՀ կառավարության պայիտստային ֆոնդից հատկացված գումարների հաշվին «Մեդիտեք» ՍՊԸ-ի հետ 27.05.2010թ.-ին, 03.09.2010թ.-ին և 11.01.2011թ.-ին կնքված թիվ ՄԲԱՊՁԲ-10/7, թիվ ՄԲԱՊՁԲ-10/19 և թիվ ԱՊՁԲ-10/108, «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի հետ 30.11.2010թ.-ին կնքված թիվ ՄԲԱՊՁԲ-10/38, «Մեդտեխնիկա պլյուս» ՓԲԸ-ի հետ 11.07.2011թ.-ին կնքված թիվ ԱՆ-ՍՁԲԸ-2011/2 և «Ջի Սթայլ» ՓԲԸ-ի հետ 07.07.2011թ. և 22.09.2011թ.-ին կնքված թիվ ԱՆ-ՍՁԲԸ-2011/1 և թիվ ԱՆ-ՍՁՄԲ-2011/2 պայմանագրերի հիման վրա ձեռք են բերվել շտապ բուժօգնության թվով 5 մեքենաներ, թվով 361 անվանում սարքավորումներ և բժշկական կահույք, որոնք հատկացվել են «Իջևանի ԲԿ», «Արմավիրի ԲԿ», «Գորիսի ԲԿ», «Արարատի ԲԿ», «Ապարանի ԲԿ», «Նոյեմբերյանի ԲԿ», «Ամասիա ԱԿ», «Տաշիրի ԲԿ», «Սևանի պոլիկլինիկա» ՓԲ ընկերություններին և ՀՀ արդարադատության նախարարության «Նուրբարաշենի քրեակատարողական հիմնարկ»-ին:

Պայմանագրերով նախատեսված և փաստացի ձեռք բերված սարքավորումների ընտրանքային կարգով կատարված փաստաթղթային համադրումներից անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

III. «Տուբերկուլյոզի դեմ պայքարի Ազգային ծրագրի ուժեղացում» և «Դեղորայքակալուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում»

ՉԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի (այսուհետ Գլոբալ հիմնադրամ) կողմից ֆինանսավորվել և ՀՀ առողջապահության նախարարության կողմից 2009-2011թթ. իրականացվել է «Տուբերկուլյոզի դեմ պայքարի Ազգային ծրագրի ուժեղացում» և «Դեղորայքակալուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» դրամաշնորհային ծրագրերը (այսուհետ՝ Ծրագրեր):

Ծրագրերի նպատակն է բնակչությանը պաշտպանել տուբերկուլյոզի տարածման վտանգից, ապահովել տուբերկուլյոզի կանխարգելման, հայտնաբերման և բուժման միջոցառումների անընդմեջ համակարգված իրականացումը, կասեցնել հիվանդության հետագա զարգացումը, նվազեցնել հասարակության հիվանդացության հավանականությունը, մահացությունը, հաշմանդամությունը և այլն:

Ծրագրերի իրականացման նպատակով կնքված պայմանագրերի պայմանագրային պարտավորությունների կատարման ընտրանքային ուսումնասիրությամբ արձանագրվել են հետևյալ խախտումները և բացթողումները՝

ՀՀ առողջապահության նախարարության և «Առողջ և ներդաշնակ ընտանիք» ՀԿ-ի միջև 18.09.2009թ. կնքված ծառայությունների վճարովի մատուցման թիվ ARM 506-G02-T-AG0732 պայմանագրով պատվիրված աշխատանքները պետք է ավարտվեին 16.07.2010թ.-ին: Պայմանագրային ողջ գումարը՝ 40,432.0 հազ. դրամը, դեռևս 28.12.2009թ.-ին փոխանցվել է կատարողին, սակայն առ այսօր ընդունվել է ընդամենը 15,447.0 հազ. դրամի կատարողական (14.01.2010թ.-ին): Չնայած նրան, որ պայմանագրային գումարի մնացած մասի՝ 24,964.9 հազ. դրամի աշխատանքները նախարարության կողմից մինչ օրս չեն ընդունվել, նախարարությունը ոչ մի միջոց չի ձեռնարկվել տվյալ գումարի ետ վերադարձի ուղղությամբ:

«Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ ՊՈԱԿ) 23.09.2010թ. կնքված դասընթացների կազմակերպման ծառայությունների գնման թիվ ՄԲՃԾԲ-10/19 պայմանգրի շրջանակներում պարտավորվել է կազմակերպել ազգային վերապատրաստողների վերապատրաստման 5-օրյա դասընթացներ 13 մասնակցի

համար, այնինչ անցկացրել է 3-օրյա դասընթացներ, սակայն պայմանագրային գումարը վճարվել է ամբողջությամբ կամ ավել է վճարվել 296.0 հազ. դրամ:

Բացի այդ, ՊՈԱԿ-ը դեղակայուն տուբերկուլյոզով հիվանդների ամբուլատոր բուժումն իրականացնող՝ 80 հոգու համար պետք է կազմակերպեր 10 հոգուց բաղկացած 8-օրյա դասընթացներ, այնինչ կազմակերպել են 5-օրյա դասընթացներ 10 հոգուց ավելի խմբերով, սակայն պայմանագրային գումարի նվազեցումները կատարվել է պակաս անցկացված օրերին ոչ համամասնորեն՝ 7,592.0 հազ. դրամի փոխարեն կատարվել է 6,517.0 հազ. դրամի նվազեցում կամ ավել է վճարվել 1,075.0 հազ. դրամ:

Խախտվել են նաև դասընթացների անցկացման պայմանագրով սահմանված ժամկետները: Պայմանագրով սահմանված ժամկետների ուշացման համար պատվիրատուի կողմից պետք է հաշվարկվեր և ՊՈԱԿ-ից գանձվեր 901.4 հազ. դրամի տույժ, ինչը չի կատարվել:

IV. Չորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ

Չորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայությունները իրենց մեջ ներառում են պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման առողջապահական պետական նպատակային ամենամյա ծրագրերին համապատասխան նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններում կատարվող բժշկական հետազոտությունները և հիվանդանոցային պայմաններում հիվանդությունների բուժումը:

Ընտրանքային կարգով կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ ծրագիրն իրականացվել է ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և ծառայությունների շրջանակներում զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց բժշկական զննման, լաբորատոր ախտորոշիչ և հիվանդանոցային հետազոտության ու բուժման կազմակերպման մասին չափորոշիչ»-ի պահանջներին համապատասխան՝ ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններում վերը նշված ծառայությունները իրականացվել են տեղամաս-տարածքային սկզբունքով, տարածաշրջանային պոլիկլինիկաների միջոցով, գինկոմիսարիատների հետ համատեղ: Հիվանդանոցային պայմաններում բուժման գործընթացի համար հատկացված միջոցների հաշվին իրականացվել է նախազորակոչային և զորակոչային տարիքի

անձանց հիվանդանոցային մասնագիտացված փորձաքննություն, սննդի ծախսերի փոխհատուցում, հիվանդանոցային փորձաքննության ընթացքում կատարված լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ, հիվանդանոցային պայմաններում գորակոչիկների և նրանց ընտանիքի անդամների բուժման արժեքի փոխհատուցում:

V. Հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայություններ և Հիգիենիկ-հակահամաճարակային ծառայության գծով պետական պատվեր

Ծրագրով նախատեսվել է իրականացնել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովմանն ուղղված աշխատանքներ, բնակչությանը մատուցել ժամանակակից պահանջներին և հաստատված չափանիշներին ու ծավալներին համապատասխան բարձրակարգ բժշկական հետազոտություններ: Նախատեսված աշխատանքներն իրականացվել են ՀՀ առողջապահության նախարարության Պետական հիգիենիկ հակահամաճարակային տեսչության թվով 18 տարածքային փորձագիտական կենտրոնների կողմից: Ընտրանքային կարգով կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ

- «Էրեբունու-Նուբարաշեն տարածքային փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը 2009-2011 թթ. ընթացքում հաշվետվություններով ցույց է տվել շրջակա միջավայրի մակարուծական թվով 802 հետազոտությունների իրականացում, սակայն փաստացի իրականացրել է 82 հետազոտություն կամ հաշվետվություններով փաստացի կատարվածից ավել է հաշվարկվել և վճարվել 720 հետազոտության արժեք, գումարով 1,440.0 հազ. դրամ:

- «Արմավիրի մարզի տարածքային փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացրած կատարողականներում, որպես վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման աշխատանքների քանակական ցուցանիշ, ախտահանված օջախների քանակի փոխարեն, ցույց է տվել վարակված անձերի թվաքանակը, ինչի արդյունքում կատարողականներով ավել է հաշվարկվել և վճարվել 900.0 հազ. դրամ:

- Երևան քաղաքի Կենտրոնի ու Նորք-Մարաշի փորձագիտական կենտրոնի կողմից կատարողականներով ցույց տրված հատուկ վտանգավոր վարակների նկատմամբ հետազոտություններից (խոլերայի նկատմամբ հետազոտություն) թվով 535 հետազոտությունները, որոնց իրականացման համար վճարվել է 2,675.0 հազ. դրամ, չեն հիմնավորվում այդ հետազոտություններն իրականացնելու համար անհրաժեշտ,

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի կողմից պատրաստված և տրամադրված, համապատասխան միջավայրերի ծավալներով:

VI. Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ

Պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների անցկացման գծով պետական պատվերի իրականացման նպատակով ՀՀ առողջապահության նախարարությունը պայմանագրեր է կնքել թվով 25 բժշկական կազմակերպությունների հետ: Պայմանագրերում ընդգրկվել են պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների չափորոշիչի ցանկում ներառված հետազոտությունները:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ երեք դեպքով ՀՀ առողջապահության նախարարության կողմից խախտվել են ՀՀ կառավարության 04.03.2004թ.-ի թիվ 318 որոշմամբ հաստատված «Ամենամյա առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ու ֆինանսավորման» կարգի 10-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, այն է ընդհանուր պայմանագրային գումարի 5 տոկոսը գերազանցող պայմանագրային գումարների վերաբաշխումները ՀՀ առողջապահության նախարարի կողմից կատարվել են առանց ՀՀ վարչապետի համաձայնության:

VII. Հաշմանդամ երեխաների օրթեզների և կորսետների պատրաստման ծառայություններ

Պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին հաշմանդամ երեխաների օրթեզների և կորսետների պատրաստման ծառայություններ գծով պետական պատվերի իրականացման ապահովման նպատակով ՀՀ առողջապահության նախարարության կողմից պայմանագրեր են կնքվել թվով երեք ընկերությունների՝ «Օրթեզ» ՍՊԸ-ի, «Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» ՓԲԸ-ի և «Արիե Կուպերսթրփի անվան վերականգնողական կենտրոն» ՓԲԸ-ի հետ:

«Օրթեզ» ՍՊԸ-ում կատարված ընտրանքային ուսումնասիրությամբ պարզվել է, որ օրթեզները և կորսետները ընկերությունը տրամադրել է «Պետության կողմից երաշխավորված երեխաների անվճար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման» չափորոշիչով նախատեսված պայմանների խախտմամբ՝ առանց բժշկական հիմքերի:

VIII. Առողջապահության համակարգի գործունեության զանգվածային

տեղեկատվության ծրագիր

Ծրագրի նպատակն է բնակչությանն օգտակար բժշկական գիտելիքների մակարդակը բարձրացնող քարոզչական, հանրամատչելի հոդվածների հրատարակումը, հեռուստաընկերություններով հաղորդումների հեռարձակումը, որոնք ուղղված կլինեն ՀՀ առողջապահության նախարարության որդեգրած քաղաքականության լուսաբանմանը, ինչպես նաև տեղեկատվական, վիճակագրական և համակարգչային աշխատանքների կազմակերպումը:

Ծրագրի իրականացման համար 2009թ.-ին պայմանագրեր են կնքվել թվով 8 ընկերությունների, 2010թ.-ին և 2011թ.-ին թվով 5 ընկերությունների հետ:

Ընտրանքային կարգով ուսումնասիրվել են «ԱԿԱԴԱ ՊՐՈ ՄԵԴԻԱ» ՍՊԸ-ի հետ կնքված առողջապահական բնագավառի գործունեության զանգվածային լրատվական միջոցներով լուսաբանման ծառայությունների մատուցման և «Առողջապահություն» հանդեսի խմբագրություն» ՓԲԸ-ի հետ կնքված գիտա-մեթոդական հոդվածների հրատարակման պայմանագրերի շրջանակներում մատուցված ծառայությունների գործընթացները, ինչից պարզվել է, որ

- 04.10.2009թ.-ին կնքված «Առողջապահական հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման ծառայությունների մատուցման» թիվ S-05 գնման պայմանագրով «ԱԿԱԴԱ ՊՐՈ ՄԵԴԻԱ» ՍՊԸ-ին պատվիրվել և վճարվել է 23910քմ ընդհանուր մակերեսով 2,391.0 հազ. դրամի առողջապահական նյութերի պատրաստման և մամուլում տպագրման աշխատանքներ, այնինչ փաստացի իրականացվել է ընդամենը 5500 քառ. սմ ընդհանուր մակերեսով առողջապահական նյութերի տպագրման աշխատանքներ, կամ պայմանագրով պատվիրված և վճարվածից 18410քառ. սմ-ով պակաս, գումարով՝ 1,841.0 հազ. դրամ:

- 21.05.2010թ.-ին կնքված թիվ ԾՁԲ-10/23 պայմանագրով «ԱԿԱԴԱ ՊՐՈ ՄԵԴԻԱ» ՍՊԸ-ին պատվիրվել և վճարվել է առողջապահական երկու հոդվածների տպագրման աշխատանքներ, այնինչ փաստացի տպագրվել է մեկ հոդված, կամ փաստացի կատարվածից ավել է վճարվել մեկ հոդվածի տպագրման աշխատանք գումարով՝ 240.0 հազ. դրամ:

- «ԱԿԱԴԱ ՊՐՈ ՄԵԴԻԱ» ՍՊԸ-ի կողմից տպագրման նյութերի ընտրությունը իրականացվել է կամայականորեն, բացակայում են ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված տպագիր նյութի թեմաների ցանկը, տպագրված հոդվածները չեն համապատասխանում պայմանագրով սահմանված տեխնիկական

բնութագրերին, իսկ որոշ դեպքերում պարբերականի խմբագրությունը չի ապահովել պայմանագրով նախատեսված նվազագույն տպաքանակը:

- «Առողջապահություն» հանդեսի խմբագրություն» ՓԲԸ-ն, որպես 2009թ.-ին տպագրած գիտամեթոդական և հանրամատչելի հոդվածներ, ներկայացրել է դեռևս 2008թ.-ին տպագրված հոդվածներ, ինչի արդյունքում ավել է վճարվել 463.0 հազ. դրամ:

IX. «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդման Ազգային ծրագրին աջակցություն»

ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի (այսուհետ՝ Գլոբալ հիմնադրամ) կողմից ֆինանսավորվել և ՀՀ առողջապահության նախարարության կողմից 2010-2011թթ. իրականացվել է «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդման Ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր):

Ծրագրի նպատակն է նվազեցնել ՄԻԱՎ-ի փոխանցումը և պահպանել ցածր տարածվածություն բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի և 15-24 տարեկան երիտասարդների շրջանում, բարելավել խնամքը, աջակցությունն ու բուժումը, ներառյալ մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելումը ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համար, ընդլայնել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին բազմաոլորտային հակազդման ռազմավարության շարունակական զարգացման համար բարենպաստ միջավայրը և այլն:

Ծրագրերի իրականացման նպատակով կնքված պայմանագրերի շրջանակում մատուցված ծառայությունների ընտրանքային ուսումնասիրությամբ պարզվել է, որ

«ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կատարող) հետ, 19.07.2010թ.-ին կնքված թիվ ARM-202-G05-H-00/06 պայմանագրի շրջանակներում պետական կառույցների ներկայացուցիչների սեմինար-վարժանքների անցկացման համար կատարողականով վճարվել է 869.0 հազ. դրամ, այնինչ փաստացի տվյալ սեմինար-վարժանքները չեն իրականացվել, ինչի մասին վկայում է նաև ՊՈԱԿ-ի կողմից Առողջապահության նախարարություն ներկայացված եռամսյակային հաշվետվությունը:

«Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կատարող) հետ 2010թ.-ի մայիսի 25-ին կնքված ծառայությունների վճարովի մատուցման թիվ ARM-202-H05-H-00/03 պայմանագրով պատվիրվել է իրականացնել մեթադոնային բուժման տրամադրում, սեմինար-վարժանքների կազմակերպում: Ծառայությունների մատուցման սկիզբը սահմանվել է 01.05.2010թ.-ը, իսկ տևողությունը 11 ամիս: Պայմանագրային գնից 13,183.8 հազ. դրամը կազմել է թվով 7 աշխատակիցների 11 ամսվա ընթացքում

մատուցվելիք ծառայությունների համար նախատեսված աշխատավարձը: Ընկերության կողմից պայմանագրով պատվիրված ծառայությունների մատուցումը սկսվել է պայմանագրով նախատեսված ժամկետից ավելի ուշ՝ 01.07.2010թ.-ից և ավարտվել պայմանագրով նախատեսված ժամկետում, հետևաբար 01.05.2010թ.-01.07.2010թ. ժամանակահատվածի համար պայմանագրով նախատեսված 2,397.1 հազ. դրամ աշխատավարձը որպես տնտեսված գումար պետք է հետ վերադարձվեր բյուջե, սակայն նշված գումարից, առանց որևէ հիմնավորման, 2010թ.-ի դեկտեմբերին կատարվել է պայմանագրով նախատեսվածից 1,813.6 հազ. դրամով ավելի աշխատավարձերի և պարգևատրումների վճարում:

Նմանատիպ խախտում է թույլ տրվել նաև «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հետ 2011թ.-ի ապրիլի 29-ին կնքված ծառայությունների վճարովի մատուցման թիվ ARM-202-H05-H-00/21 պայմանագրով պատվիրված ծառայությունների մատուցման ընթացքում՝ տնտեսված գումարները բյուջե վերադարձնելու փոխարեն կատարվել է պայմանագրով նախատեսվածից 1,716.4 հազ. դրամով ավելի աշխատավարձերի և պարգևատրումների վճարում:

X. Պետական սեփականության կառավարում և օգտագործում

ՀՀ առողջապահության նախարարության համակարգում ստուգվող ժամանակաշրջանում գործել է 100 տոկոս պետական բաժնետոմսերով 20 բաժնետիրական ընկերություններ և 36 պետական ոչ առևտրային կազմակերպություններ:

ՀՀ առողջապահության նախարարության տրամադրության տակ գտնվող գույքը /բժշկական սարքավորումներ/ և համակարգի Պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված գույքը մի շարք դեպքերում օտարվել և վարձակալության է հանձնվել ՀՀ կառավարության 13.06.2006թ. թիվ 882-Ն և 22.02.2001թ. թիվ 125 որոշումներով սահմանված կարգի խախտմամբ:

Մարքավորումների մասով

- 2006-2007րթ. ՀՀ պետական բյուջեից «Կենտրոնացված կարգով նորագույն բժշկական սարքավորումների և գործիքների ձեռքբերման գծով պետական պատվեր» ծրագրով ձեռք բերված սարքավորումները ՀՀ առողջապահության նախարարության կողմից վարձակալության են տրվել ՀՀ կառավարության թիվ 125 որոշմամբ սահմանված

նվազագույն վարձավճարից պակաս գումարով: Արդյունքում պետական բյուջե պակաս վարձավճար է գանձվել 698.5 հազ. դրամ («Նաիրի» բժշկական կենտրոնն ՓԲԸ-ից 604.9 հազ. դրամ և «Պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի ԳԿ» ՓԲԸ-ից 93.6 հազ. դրամ):

- Ստուգման ավարտի օրվա՝ 16.12.2011թ.-ի դրությամբ սարքավորումների վարձավճարների գծով առաջացած պարտքը կազմել է 541.5 հազ. դրամ, որից «Մալաթիա» ԲԿ ՓԲԸ-ինը 418.7 հազ. դրամ և «Էրեբունի» ԲԿ ՓԲԸ-ինը 122.8 հազ. դրամ:

Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գույքի մասով

- «Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը անհատույց օգտագործման իրավունքով իրեն ամրացված շենքի տարածքը վարձակալության է հանձնել ՀՀ Կառավարության 22.02.2001թվականի թիվ 125 որոշմամբ հաստատված նվազագույն վարձավճարից ավելի ցածր գումարով, ինչի արդյունքում ստուգվող ժամանակաշրջանում պակաս վարձավճար է գանձվել 356.8 հազ. դրամ, որից Հարությունյան Վիգենի հետ 01.09.2008 թ.-ին կնքված պայմանագրից 303.2 հազ. դրամ և «Չանգեգուր Թրեյնինգ» ՍՊԸ-ի հետ 01.09.2009 թ.-ին կնքած պայմանագրից 53.6 հազ. դրամ:

- ՀՀ Առողջապահության նախարարության համակարգի «Հոգեբուժական կենտրոն» ՓԲ ընկերությունը 19.07.2007 թ.-ին Էվելինա Խաչատրյանի հետ 40 տարի ժամկետով գույքի վարձակալության պայմանագիր է կնքել, որով վարձակալության է հանձնել Կոտայքի մարզի Քասախ գյուղում գտնվող 2668.5 ք/մ տարածքով՝ 134,050.1 հազ. դրամ կադաստրային արժեքով շենքը և վարձավճար սահմանել տարեկան 140.4 հազ. դրամ, այնինչ վարձավճարի չափը պետք է սահմանվեր շենքի կադաստրայի արժեքի 5 տոկոսից ոչ պակաս չափով: Նշվածի արդյունքում պետական բյուջե պակաս է վճարել 892.1 հազ. դրամ շահութաբաժին:

- «Հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման կենտրոն» ՊՈԱԿ-ը, անտեսելով ՀՀ կառավարության որոշման պահանջները, երկու տրանսպորտային միջոցներ՝ ԳԱԶ-5312 բենզատար ավտոմեքենան՝ գնահատված 288.0 հազ. դրամ և ՈՒԱԶ 469Բ մակնիշի ավտոմեքենան՝ գնահատված 50.0 հազ. դրամ, օտարել է առանց աճուրդ կամ մրցույթ կազմակերպելու, ուղղակի վաճառքի ձևով նախորոք հայտնի անձանց, առանց սակարկության, ինչը չէր կարող ապահովել մրցակցություն և ձևավորեր իրական արժեք :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերականգնման ենթակա գումարներ

• Տուբերկուլյոզի դեմ պայքարի Ազգային ծրագրի ուժեղացում» և «Դեղորայքակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրերի շրջանակներում Նախարարությունը «Առողջ և ներդաշնակ ընտանիք» ՀԿ-ից ընդունել է պայմանագրով նախատեսածից 24,965.0 հազ. դրամով պակաս կատարողական, սակայն պայմանագրային ողջ գումարը փոխանցել է ՀԿ-ին, հետևաբար կատարողականից ավել փոխանցված 24,965.0 հազ. դրամը ենթակա է հետ գանձման:

• Տուբերկուլյոզի դեմ պայքարի Ազգային ծրագրի ուժեղացում» և «Դեղորայքակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրերի շրջանակներում «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի կողմից վերապատրաստման դասընթացները սահմանվածից պակաս ծավալով իրականացնելու արդյունքում ավել է վճարվել 1,371.0 հազ. դրամ:

• «Հայաստանի Հանրապետությունում ՍԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդման Ազգային ծրագրին աջակցություն» ծրագրի շրջանակում «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կատարողականներով սեմինար-վարժանքները իրականացման համար փաստացի կատարվածից ավել է վճարվել 869.0 հազ. դրամ :

• Հիգենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայություններ ծրագրի շրջանակում Պետական հիգենիկ հակահամաճարակային տեսչության տարածքային փորձագիտական կենտրոնների կողմից ներկայացրած կատարողականներում հետազոտությունների քանակը փաստացի կատարվածից ավել ցույց տալու արդյունքում ավել է վճարվել 2,340.0 հազ. դրամ:

• Առողջապահության համակարգի գործունեության զանգվածային տեղեկատվության ծրագրի շրջանակներում «ԱԿԱԴԱ ՊՐՈ ՍԵԳ-ԻԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված կատարողականներում տպագրված հոդվածների մակերեսները և քանակը փաստացի կատարվածից ավել ցույց տալու արդյունքում ավել է վճարվել 2,081.0 հազ. դրամ:

• Առողջապահության համակարգի գործունեության զանգվածային տեղեկատվության ծրագրի շրջանակներում «Առողջապահություն» հանդեսի խմբագրություն» ՓԲԸ-ի կատարողականներում փաստացի տպագրված հոդվածներից ավելի հոդվածներ ցույց տալու արդյունքում ավել է վճարվել 463.0 հազ. դրամ:

• Տուբերկուլյոզի դեմ պայքարի Ազգային ծրագրի ուժեղացում» և «Դեղորայքակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրերի շրջանակներում «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի կողմից պայմանագրով սահմանված ժամկետի ուշացման համար պետք է հաշվարկվի և գանձվի 901.4 հազ. դրամ տույժ:

Չհիմնավորված ծախս

• «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի հակազդման Ազգային ծրագրին աջակցություն» ծրագրի շրջանակում «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին պայմանագրի նախահաշվով նախատեսվածից ավել է վճարվել 3,530.0 հազ. դրամի աշխատավարձ և պարգևատրում:

• Հիգենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայություններ ծրագրի շրջանակում կատարողականներով ցույց տրված հատուկ վտանգավոր վարակների նկատմամբ հետազոտություններից 2,675.0 հազ. դրամի հետազոտությունները չեն հիմնավորվում այդ հետազոտություններն իրականացնելու համար անհրաժեշտ, «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի կողմից պատրաստված և տրամադրված, համապատասխան միջավայրերի ծավալներով:

Պետական սեփականության կառավարման և օգտագործման մասով

• 2006-2007թթ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով ձեռք բերված սարքավորումները ՀՀ առողջապահության նախարարության կողմից վարձակալության է տրվել ՀՀ կառավարության թիվ 125 որոշմամբ սահմանված նվազագույն վարձավճարից պակաս գումարով: Արդյունքում պետական բյուջե պակաս է գանձվել 698.5 հազ. դրամ վարձավճար (604.9 հազ. դրամ «Նաիրի» բժշկական կենտրոն ՓԲԸ-ից և 93.6 հազ. դրամ «Պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի ԳԿ» ՓԲԸ-ից):

• Սարքավորումների վարձավճարների գծով առաջացած պարտքը ստուգման ավարտի օրվա դրությամբ կազմել է 541.5 հազ. դրամ, որից «Մալաթիա» ԲԿ ՓԲԸ-ինը 418.7 հազ. դրամ և «Էրեբունի» ԲԿ ՓԲԸ-ինը 122.8 հազ. դրամ: ՀՀ առողջապահության նախարարությունը պայմանագրերի լուծման հիմքերի առկայության պարագայում, պայմանագրերը չի լուծարել, քայլեր չի ձեռնարկել վարձավճարները գանձելու ուղղությամբ:

• «Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը գույքը վարձակալության է տրվել ՀՀ կառավարության թիվ 125 որոշմամբ սահմանված նվազագույն վարձավճարից պակաս գումարով: Արդյունքում պակաս վարձավճար է գանձվել 356.8 հազ. դրամի չափով:

- «Հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ-ն վարձակալության հանձնած գույքի վարձավճարի չափը սահմանված չափից պակաս սահմանելու արդյունքում պետական բյուջե պակաս է վճարել 892.1 հազ դրամ շահութաբաժին:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմին՝

- ձեռնարկել միջոցառումներ հավելագրված գումարները վերականգնելու և արձանագրված թերությունները վերացնելու ուղղությամբ:

ՀՀ պետական բյուջե վերականգնվող գումարները փոխանցել ՀՀ վերահսկիչ պալատի անվանը բացված «պետությանը պատճառված վնասների փոխհատուցումից մուտքեր» (900005281515) հաշվեհամարին, կամ գանձապետարանի համակարգում բացված այլ եկամտային հաշվին՝ նշելով «96» կոդը:

Համաձայն «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետի, մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատին գրավոր տեղեկատվություն տրամադրել հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
Էլ. փոստ minister@moh.am

_____ N _____

Ձեռ N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 22.03.2012թ. №02/23.14/3964-12 և 20.04.2012թ. №01/15/2123-12 հանձնարարականների ու ղեկավարվելով ՀՀ վարչապետի 04.05.2008թ. №225-Ա որոշման 2-րդ կետի պահանջով Ձեզ եմ ներկայացնում ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 07.03.2012թ. թիվ 5/5 որոշմամբ հաստատված «ՀՀ առողջապահության նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման և պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվության» և թիվ 5/6 որոշմամբ հաստատված «ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված վարկային և դրամաշնորհային ծրագրերի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվության» ՀՀ առողջապահության նախարարության բացատրությունները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

Կատարող՝ Ա. Աթոյան
Ֆինանսատնտեսագիտական
վարչություն հեռ. 564121

**ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 07.03.2012թ. թիվ 5/5 որոշմամբ հաստատված
«ՀՀ առողջապահության նախարարությանը պետական բյուջեից հատկացված
միջոցների օգտագործման և պետական սեփականության կառավարման և
օգտագործման նկատմամբ վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ
հաշվետվության»**

III. «Տուբերկուլյոզի դեմ պայքարի Ազգային ծրագրի ուժեղացում» և «Դեղորայքակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում»

ՀՀ առողջապահության նախարարության և «Առողջ և ներդաշնակ ընտանիք» ՀԿ-ի միջև 2009 թվականի սեպտեմբերի 18-ին կնքված ծառայությունների վճարովի մատուցման թիվ ARM 506-G02-T-AG0732 պայմանագրի շրջանակներում կատարված 24,964.9 հազ. դրամի չափով աշխատանքները նախարարության կողմից չեն ընդունվել պայմանագրով սահմանված պահանջներին որոշակի անհամապատասխանությունների առկայության հիմքով: Կողմերի միջև տեղի ունեցած քննարկումների արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել այդ գումարի դիմաց կատարել փոխհատուցում աշխատանքով:

«Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ը 23.09.2010թ. «Պետության կարիքների համար տուբերկուլյոզի բնագավառում դասընթացների կազմակերպման ծառայությունների գնման» №ՄԲԾՁԲ-10/19 պայմանագրով պարտավորվել էր կատարել 15 կետից բաղկացած տուբերկուլյոզի բնագավառում դասընթացների կազմակերպման ծառայություններ: Պայմանագրի նախահաշվի 3-րդ կետով («Ազգային վերապատրաստողների վերապատրաստման կազմակերպում») նախատեսված է եղել 5-օրյա դասընթաց 25 մասնակցի համար՝ 573,0 հազ.դր.(առանց ԱԱՀ-ի)նախահաշվային գումարով: Այս դասընթացները ՀՀ առողջապահության նախարարության և Գլոբալ հիմնադրամի համաձայնությամբ իրականացվել են 3 օրվա ընթացքում՝ առանց մասնակիցների թվի կրճատման: Ընդ վորում, դրանց վրա ծախսվել է 558,6 հազ.դր., կամ տնտեսվել 14,4 հազ.դր.

Պայմանագրի 12-րդ կետով («Տեղային վերապատրաստման կազմակերպում այն անձնակազմի համար, որը կմասնակցի ԴԿ տուբերկուլյոզով հիվանդների ամբուլատոր

բուժմանը») նախատեսված է եղել 8-օրյա դասընթաց 80 մասնակցի համար՝ 20246,4 հազ.դր. (առանց ԱԱՀ-ի) նախահաշվային գումարով: Այս դասընթացների տևողությունը նույնպես համաձայնեցնելով ՀՀ առողջապահության նախարարության և Գլոբալ հիմնադրամի հետ կրճատվել է մինչև 5 օր, առանց մասնակիցների թվի կրճատման, որի արդյունքում տնտեսվել է 6517,3 հազ.դր. Պայմանագրային գումարների համամասնորեն նվազեցման անհնարինությունը պայմանավորված է դասընթացների անցկացման հաստատուն ծախսերով, որոնք կախված չեն դասընթացի տևողությունից, օրինակ՝ հրավիրված արտասահմանյան փորձագետների հաստատուն ծախսերով (ավիատոմս, վիզա, ապահովագրություն), դասախոսության նյութերի, վկայականների տպագրության/բազմացման ծախսերով, դասախոսության ժամանակ տրամադրվող գրենական պիտույքների ծախսերով:

Ինչ վերաբերում է դասընթացների անցկացման պայմանագրով սահմանված ժամկետի խախտմանը, ապա դա պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ նշված ծառայությունների գնման համար կազմակերպված ՊԳԳ-ՄՎԾԶԲ-10/19 մրցույթում պարտված մասնակցի կողմից մրցույթի արդյունքների բողոքարկման պատճառով ՀՀ ֆինանսների նախարարությունը կացեցրել էր պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումը՝ մինչև բողոքի քննարկումը: Դրա հետևանքով պայմանագրի կատարման ժամկետը 20.12.2010թ. երկարաձգվել էր 80 օրով: Բացի դրանից, նշյալ ծրագրի նախահաշիվը 2011թ. համար ՀՀ կառավարության կողմից հաստատվել էր 08.04.2011թ., որից հետո միայն պայմանագիրն այդ տարվա մասով ուժի մեջ է մտել և հնարավոր դարձել ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի կողմից պայմանագրով նախատեսված աշխատանքների ամբողջ ծավալով իրականացումը:

V. «Հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայություններ և հիգիենիկ-հակահամաճարակային ծառայության գծով պետական պատվեր»

ՀՀ ԱՆ Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության «Երևանի Էրեբունու և Նուբարաշենի տարածքային փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մակաբուծաբանական հետազոտությունների կատարման ընթացքում թույլ տված թերացումների փաստը ընդունելու հանգամանքից ելնելով, ՀՀ առողջապահության

նախարարի կողմից սահմանվել է վերջնաժամկետ 01.07.2012թ. ավել հաշվարկված 1.440.0 հազ դրամի դիմաց կատարել փոխհատուցում աշխատանքով:

ՀՀ ԱՆ Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության «Արմավիրի մարզային փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման աշխատանքներում արձանագրված թերացումների փաստը ընդունելու հանգամանքից ելնելով, ՀՀ առողջապահության նախարարի կողմից սահմանվել է վերջնաժամկետ 01.07.2012թ. ավել հաշվարկված 900.0 հազ դրամի դիմաց կատարել փոխհատուցում աշխատանքով»:

ՀՀ ԱՆ Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության «Երևանի Կենտրոնի և Նորք-Մարաշի տարածքային փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կատարողականով ցույց տրված հատուկ վտանգավոր վարակների նկատմամբ հետազոտությունների իրականացման համար 2009թ. «Նյու Ինտերնեյշնլ Բիզնես Ֆարմ» ՍՊԸ-ից ձեռք է բերվել հիմնային ազար (հաշիվ-ապրանքագրեր №4831 06.07.2009թ. և №5247 21.07.2009թ.): Տեղում պատրաստվել է 50.000 մլ հիմնային ազար, որն օգտագործվել է 2009թ. խոլերայի նկատմամբ թվով 535 հետազոտություններ կատարելու համար:

VII. «Հաշմանդամ երեխաների օրթեզների և կորսետների պատրաստման ծառայություններ»

Պետական պատվերի շրջանակներում իրականացվող հաշմանդամների օրթեզավորումը կատարվում է ՀՀ առողջապահության նախարարության հաստատած հետևյալ փաստաթղթերի հիման վրա՝ մասնագիտացված բժշկական կենտրոնների կողմից տրված բժշկական ուղեգիր, անձը հաստատող փաստաթղթի, ինչպես նաև սոցիալապես անապահով (հատուկ) խմբին պատկանելիությունը հաստատող փաստաթղթի պատճենները: Բժշկական ուղեգիրը ներառում է ուղեգրվող հիվանդի ախտորոշումը, նշանակվող սարքի տեսակը, պետպատվերի իրականացման հիմքերը, բուժող բժշկի անունը, բուժհիմնարկի ղեկավարի ստորագրությունը և կնիքը: Բացի դրանից, օրթեզավորումը կարող է իրականացվել նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված ուղեգրի հիման վրա:

Այսպիսով, օրթեզի պատրաստման համար բժշկական եզրակացությունը (Էպիկրիզը) անհրաժեշտ չէ, քանի որ բժշկական ուղեգրում արդեն իսկ նշվում է հիվանդության ախտորոշումը և նշանակվող օրթեզի տեսակը, որի հիման վրա էլ այն պատրաստվում է:

VIII. «Առողջապահության համակարգի գործունեության զանգվածային տեղեկատվության ծրագիր»

«Ակադա Պրո Մեդիա» ՍՊԸ-ի կողմից 04.10.2009թ. «Առողջապահական հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման ծառայությունների մատուցման» թիվ S-05 և 21.05.2010թ. թիվ ԾՁԲ-10/23 պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքում թույլ տված խախտումների ու բացթողումների փաստը լիովին ընդունելու հանգամանքից ելնելով, ՀՀ առողջապահության նախարարի կողմից սահմանվել է վերջնաժամկետ 01.06.2012թ. թերի կատարված աշխատանքների դիմաց ստացած գումարների վերականգման համար՝ 2081,0 հազ.դր. ընդհանուր գումարով:

Ինչ վերաբերում է «Աջողջապահություն» հանդեսի խմբագրություն» ՓԲԸ-ի կողմից գիտամեթոդական և հանրամատչելի նախկինում տպագրված հոդվածների կրկնակի տպագրման արդյունքում անհիմն ստացած եկամուտին, ապա վերջինս արդեն իսկ վերականգնված է 12.04.2012թ. №20 վճարման հանձնարարականով՝ 463,0 հազ.դր. գումարով:

IX. «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդման Ազգային ծրագրին աջակցություն»

ՀՀ առողջապահության նախարարության և «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 19.07.2010թ.-ին կնքված թիվ ARM-202-G05-H-00/06 պայմանագրի շրջանակներում պետական կառույցների ներկայացուցիչների համար 2010թ. առաջին հաշվետու ժամանակահատվածում (01.07-30.09.2010թ.) իրականացվել են 3 սեմինար-վարժանքներ՝ 2010թ. սեպտեմբերի 16-18-ը, 23-24-ը, 27-29-ը, որոնց մասնակիցների թիվը կազմել է 39 մարդ: Այս տեղեկատվությունը ներկայացվել է առաջին հաշվետու ժամանակահատվածի ծրագրային հաշվետվության մեջ: Առաջին հաշվետու ժամանակահատվածում այդ

սեմինար-վարժանքների իրականացման ծախսերը չեն վճարվել, ինչը երևում է նույն հաշվետու ժամանակահատվածի ֆինանսական հաշվետվության մեջ:

Առաջին հաշվետու ժամանակահատվածում իրականացված սեմինար-վարժանքների ծախսերը՝ 869.0 հազ.դր. չափով վճարվել են 20.12.2010թ. ներկայացված և ստորագրված N1 և N2 հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա 28.12.2010թ. N585 և N586 վճարման հանձնարարականներով, այսինքն երկրորդ հաշվետու ժամանակահատվածում (01.10-31.12.2010թ.): Երկրորդ հաշվետու ժամանակահատվածում պետական կառույցների ներկայացուցիչների համար սեմինար-վարժանքներ չեն իրականացվել, ինչը երևում է նույն հաշվետու ժամանակահատվածի ծրագրային հաշվետվության մեջ:

Այսպիսով, երկրորդ հաշվետու ժամանակահատվածում կատարված վճարումը առաջին հաշվետու ժամանակահատվածում իրականացված սեմինար-վարժանքների ծախսերի փոխհատուցումն է:

ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ ԱՆ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի միջև 25.05.2010թ. կնքված №ARM-202-H05-H-00/03 և 29.04.2011թ. կնքված №ARM-202-H05-H-00/21 պայմանագրերով նախատեսված ծառայությունների մատուցումը սկսվել է պայմանագրերում սահմանված ժամկետներում՝ համապատասխանաբար 01.05.2010թ. և 01.04.2011թ.: Պայմանագրերի կնքման ժամկետների և դրանցով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետների անհամապատասխանությունը բացատրվում է այն հանգամանքով, որ պայմանագրերի՝ սահմանված կարգով համաձայնեցումը ՀՀ ֆինանսների նախարարությունում երկարաձգվել է:

X. Պետական սեփականության կառավարում և օգտագործում

ՀՀ առողջապահության նախարարությունը 2006-2007թ.թ. «Կենտրոնացված կարգով նորագույն բժշկական սարքավորումների և գործիքների ձեռքբերման գծով պետական պատվեր» ծրագրով ձեռք բերված սարքավորումները վարձակալական հիմունքներով հանձնել է մի շարք բժշկական կազմակերպությունների: Վարձակալության պայմանագրերով սահմանված վարձավճարների հաշվարկման անճշտությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ պայմանագրերի գործողության ընթացքում ՀՀ կառավարության 09.04.2009թ. №349-Ն որոշմամբ փոփոխվել է վարձակալության

տրամադրվող գույքի ամսական վարձավճարի նվազագույն մեծության որոշման կարգը: Արդյունքում «Նաիրի ԲԿ» ՓԲԸ-ի հետ 29.09.2006թ. կնքված №Վ-3 վարձակալության պայմանագրով վարձավճարը պակաս է հաշվարկվել 12,6 հազ դր. չափով, իսկ 11.12.2007թ. կնքված №Վ-1 վարձակալության պայմանագրով վարձավճարը ավել է հաշվարկվել 63,0 հազ դր. չափով՝ հիշյալ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված չափաքանակներից: Այսինքն երկու պայմանագրերով հաշվարկված վարձավճարների հանրագումարը գերազանցում է վարձավճարի սահմանված նվազագույն չափը 50,4 հազ. դրամով:

Բացի դրանից, «Պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի ԳԿ» ՓԲԸ-ի հետ 11.10.2006թ. կնքված վարձակալության պայմանագրի վարձավճարի գումարը սահմանված նվազագույնից պակաս է հաշվարկվել 10,3 հազ.դր. չափով: Այսպիսով, երկու ընկերությունների հետ կնքված վարձակալության պայմանագրերի իրականացման արդյունքում պետական բյուջե է գանձվել 40,1 հազ.դր. ավել գումար (հաշվարկները ներկայացվում են կից հավելվածներով №N° 1,2,3): Ինչ վարաբերում է սարքավորումների վարձավճարների գծով առաջացած պարտքին, ապա «Մալաթիա ԲԿ» ՓԲԸ-ի պարտքը 16.12.2011թ. դրությամբ կազմել է 190,4 հազ.դր, որի վճարումն ուշացնելու համար վերջինս վճարել է վարձակալության պայմանագրով սահմանված տույժեր, իսկ «Էրեբունի ԲԿ» ՓԲԸ-ն նույն ամսաթվի դրությամբ վարձավճարի պարտք չի ունեցել:

«Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը իրեն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքը հանձնել է վարձակալության, որից ստացված եկամուտները համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի հանդիսանում են կազմակերպության սեփականությունը: Վարձավճարի՝ սահմանված նվազագույնից ավելի ցածր սահմանումը կատարվել է անիրազեկության պատճառով, սակայն բացի վարձավճարից վարձակալից ամսական գանձվել է նաև սպասարկման վճար 128,9 հազ.դրամի չափով:

ՀՀ ԱՆ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ կողմից 19.07.2007թ. Էվելինա Խաչատրյանի հետ կնքած վարձակալության պայմանագրով սահմանված վարձավճարը պակաս հաշվարկելու հետևանքով պետական բյուջե պակաս է վճարվել 892,1 հազար

դրամ, որն ընկերությունը պարտավորվել է ՀՀ առողջապահության նախարարության սահմանած ժամկետում վերականգնել պետական բյուջե:

ՀՀ ԱՆ «Հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման կենտրոն» ՊՈԱԿ-ը 2010 և 2011 թվականներին կատարել է կազմակերպության սեփականությունը հանդիսացող հիմնական միջոցների դուրս գրում և օտարում: Այդ հիմնական միջոցները գնահատվել են ՀՀ կառավարության 13.06.2003թ. №882-Ն որոշմամբ հաստատված «Պետական կառավարչական հիմնարկներին ամրացված, պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող և դրանց ամրացված գույքի օտարման կարգի» 3-րդ կետի համաձայն՝ գնահատող կազմակերպության (անկախ գնահատողի) կողմից: Օտարման ենթակա հիմնական միջոցների գնահատված արժեքը կազմել է մեկ միլիոն դրամից փոքր գումար, ինչը կազմակերպության ղեկավարին թույլ է տվել ընդունել հիմնական միջոցների օտարման մասին որոշում, հիմք ընդունելով նշված «Կարգի» 6-րդ կետը: Բացի դրանից, նույն «Կարգի» 2-րդ կետով սահմանված դրույթի համաձայն գույքի օտարումը, բացի աճուրդից կամ մրցույթից կարող է իրականացվել նաև ուղղակի վաճառքի ձևով՝ վերը նշված որոշման հիման վրա:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի ԳՀԿ» ՓԲԸ-ին ՀՀ պետական բյուջեի «Կենտրոնացված կարգով նորագույն բժշկական սարքավորումների և գործիքների ձեռքբերման գծով պետական պատվեր» ծրագրով ձեռք բերված սարքավորումների վարձավճարների վճարումների վերաբերյալ

NN	Սարքավորման անվանումը	Ձեռքբերման արժեք (հազ.դրամ)	Վարձավճարի չափը			Վճարում 11.10.2006թ.-01.05.2009թ. ժամանակահատվածում			Վճարում 01.05.2009թ.-01.10.2011թ. ժամանակահատվածում			Տարբերությունը (հազ.դրամ) (ավելը + , պակասը -)
			Ըստ պայմանագրի (ՀՀ դրամ)	Ըստ ՀՀ կառավարության 22.02.2001 թ. N125 որոշման		Փաստացի վճարված ըստ պայմանագրի (հազ. դրամ) ս7=ս4x32ամիս	Ըստ ՀՀ կառավարության 22.02.2001 թ. N125 որոշման (հազ. դրամ) ս8 = ս5x32ամիս	Տարբերությունը (հազ.դրամ) (ավելը + , պակասը -)	Փաստացի վճարված ըստ պայմանագրի (հազ. դրամ) ս10 =ս4x28ամիս	Ըստ ՀՀ կառավարության 22.02.2001 թ. N125 որոշման (հազ. դրամ) ս11 =ս 6x28ամիս	Տարբերությունը (հազ.դրամ) (ավելը + , պակասը -)	
				Մինչև 01.05.2009թ. (ՀՀ դրամ)	01.05.2009թ.-ից հետո (ՀՀ դրամ)							
1	2	3	4	5	6	7	8	9=7-8	10	11	12=10-11	13 = 9+12
1	Թոքերի արհեստական շնչառության սարք	7,600.0	128,567	130,467	126,667	4,114.14	4,174.94	-60.80	3599.87	3,546.67	53.20	-7.60
2	Ատամնաբուժական համալիր 4	2,750.0	46,521	47,208	45,833	1,488.67	1,510.65	-21.98	1302.58	1,283.32	19.26	-2.72
ԸՆԴԱՄԵՆԸ			175,088	177,675	172,500	5,602.81	5,685.59	-82.78	4,902.45	4,829.99	72.46	-10.32